«ՀՀ Արագածոտնի մարզի Հնաբերդի Երվանդ Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենությունը հայտարարում է մրցույթ՝ հայոց լեզվի եւ գրականության (12 դասաժամ), աշխարհագրության (11 դասաժամ), պատմության (12 դասաժամ) եւ կենսաբանության (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,

2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (միջին մասնագիտական կրթություն ունեցող եւ կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),

3. անձը հաստատող փաստաթուղթ,

4. «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

5. ինքնակենսագրություն (Ձև 5),

6. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,

10. հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 եւ ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում).

11. «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաեւ՝ 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ.

12. «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 23-ից մինչեւ հոկտեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 9-ին՝ ժամը 14:00-ին, Հնաբերդի Ե. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցում. հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Ծաղկահովիտ համայնք, Հնաբերդ բնակավայր, 1-ին փողոց, շենք՝ 1:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով՝ 094 62-48-74: